Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-588-17.05.2023-ԱՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» 2014 թվականի փետրվարի 4-ի ՀՕ-1-Ն օրենքի 7.9-րդ հոդվածում կատարել հետևյալ լրացումները.

1) 1-ին մասում «պաշտոնաթող Հանրապետության նախագահը» բառերից հետո լրացնել «պաշտոնաթող վարչապետը» բառերը.

2) հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասերով.

«4. Հայաստանի Հանրապետության օդանավակայանների պաշտոնական պատվիրակությունների սրահից օգտվող օտարերկրյա պատվիրակությունների, Հայաստանի Հանրապետության պաշտոնատար անձանց սպասարկման կարգը, ինչպես նաև այդ սրահից օգտվող օտարերկրյա պատվիրակությունների և Հայաստանի Հանրապետության պաշտոնատար անձանց ցանկը սահմանվում է վարչապետի որոշմամբ:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության օդանավակայանների պաշտոնական պատվիրակությունների

սրահից կարող են օգտվել նաև սույն հոդվածի 4-րդ մասում նշված պաշտոնատար անձանց ընտանիքի անդամները:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի դրույթը տարածվում է 2018 թվականից հետո պաշտոնաթող դարձած վարչապետների վրա:

Երկրորդ ընթերցում

Կ-588-17.05.2023-ԱՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» 2014 թվականի փետրվարի 4-ի ՀՕ-~~0~~1-Ն օրենքի 7.9-րդ հոդվածում ~~ը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ եւ 5-րդ մասերով~~կատարել հետևյալ լրացումները.

3) 1-ին մասում «պաշտոնաթող Հանրապետության նախագահը» բառերից հետո լրացնել «պաշտոնաթող վարչապետը» բառերը.

4) հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասերով.

«4. Հայաստանի Հանրապետության օդանավակայանների պաշտոնական պատվիրակությունների սրահից օգտվող օտարերկրյա պատվիրակությունների, Հայաստանի Հանրապետության պաշտոնատար անձանց սպասարկման կարգը, ինչպես նաեւ այդ սրահից օգտվող օտարերկրյա պատվիրակությունների եւ Հայաստանի Հանրապետության պաշտոնատար անձանց ցանկը սահմանվում է վարչապետի որոշմամբ:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության օդանավակայանների պաշտոնական պատվիրակությունների սրահից ~~սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով~~ կարող են օգտվել նաեւ սույն հոդվածի 4-րդ մասում նշված պաշտոնատար անձանց ընտանիքի անդամները:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի դրույթը տարածվում է 2018 թվականից հետո պաշտոնաթող դարձած վարչապետների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-588-17.05.2023-ԱՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	**Նախագծի վերնագիր**	Առաջարկում ենք շտկել Նախագծի վերնագրում առկա վրիպակը՝ «ՕՐԵՆՈՒՄ» բառը փոխարինելով «ՕՐԵՆՔՈՒՄ» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	**1-ին հոդված**	1. Նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք «ՀՕ-01-Ն» ձևակերպումը փոխարինել «ՀՕ-1-Ն» ձեւակերպմամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, ինչպես նաև «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական	Ընդունվել է	Ընդունվել է

			երաշխիքների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) ճիշտ հերթական համարը: 2. Նախատեսել դրույթ, որի համաձայն պաշտոնաթող վարչապետը ևս օգտվի օդանավակայանի հատուկ առանձնացված սրահից: (տարածվի 2018թ.-ից հետո այդ պաշտոնը զբաղեցնող անձի վրա): Ըստ այդմ, 1-ին հոդվածի «7.9-րդ» բառից հետո հանել «հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասերով» բառերը և լրացնել «կատարել հետևյալ լրացումները. 1) 1-ին մասում «պաշտոնաթող Հանրապետության նախագահը» բառերից հետո լրացնել «պաշտոնաթող վարչապետը»» բառերը: Դրանով պայմանավորված նախագիծը համարակալվել է «2)» մասով: 3. Տարընկալումից խուսափելու և հստակեցնելու նպատակով առաջարկում ենք օրենքի նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 7.9-րդ հոդվածում լրացվող նոր՝ 5-րդ մասում հստակ սահմանել, թե ովքեր	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			իրավունք ունեն օգտվելու Հայաստանի Հանրապետության օդանավակայանների պաշտոնական պատվիրակությունների սրահից: Հաշվի առնելով վերոգրյալը 1-ին հոդվածի 5-րդ մասը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ՝ «5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության օդանավակայանների պաշտոնական պատվիրակությունների սրահից կարող են օգտվել նաև սույն հոդվածի 4-րդ մասում նշված պաշտոնատար անձանց ընտանիքի անդամները:»		
3.	Կառավարություն	2-րդ հոդված	Հոդված 2-ը լրացվել է նոր 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի դրույթը տարածվում է 2018 թվականից հետո պաշտոնաթող դարձած վարչապետների վրա:»:	Ընդունվել է	Ընդունվել է